Տպագրված է 2 օրինակից

Օրինակ 1

Հաստատված է
«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ»
հասարակական կազմակերպության
ընդհանուր ժողովի կողմից
«14» նոյեմբերի 2023 թ.

Նախագահ Արթուր Սաքունց

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
կենտրոնական մարմնի կողմից

19.12.2005 թ
գրանցման օրը, ամիսը, տարին

211.171.03708
գրանցման համարը

06926024
Հարկ վճարողի հաշվառման համարը

19.12.2005թ. գրանցված կանոնադրության թիվ 001-2
փոփոխությունը գրանցված է ՀՀ իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի կողմից

«25» հունվարի 2024թ.

Աշխատակից՝

# «ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»
# հասարակական կազմակերպության

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրություն)

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը (կրճատ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ), այսուհետ՝ Կազմակերպություն, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող, ոչ առևտրային կազմակերպություն է:
ՀՔԱ Վանաձորի գրասենյակը քաղաքական նպատակներ չի հետապնդում, որևէ քաղաքական կուսակցության չի հարում:
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի լրիվ անվանումն է՝

հայերեն «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն

ռուսերեն «Ванадзорский офис Хельсинкской Гражданской Ассамблеи» Общественная Организация

անգլերեն "Helsinki Citizens' Assembly - Vanadzor" Non Governmental Organization

1.2. Կազմակերպությունը գործում է ինքնակառավարման, ինքնաֆինանսավորման, ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան: Կազմակերպության գործունեությունը կազմակերպվում և իրականացվում է կամավորության, հրապարակայնության, թափանցիկության, անդամների իրավահավասարության չափանիշներով:
Կազմակերպության գործունեությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերին, Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, ինչպես նաև սույն կանոնադրությանը:

1.3. Կազմակերպությունը գործունեություն է ծավալում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Կազմակերպությունը համագործակցում է տեղական, հանրապետական, տարածաշրջանային և միջազգային հասարակական (ոչ կառավարական), իրավապաշտպան, գիտահետազոտական կազմակերպությունների, պետական հաստատությունների, անհատների հետ:
Կազմակերպության գտնվելու վայրն է՝

1.4 Կազմակերպության հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, շենք 59
Էլեկտրոնային հասցե՝ info@hcav.am
Հեռախոսահամար՝ (+374 ) 322 4-22-68
(+374) 11 24 22 68

1.5. Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից:

Կազմակերպությունը ունի կլոր կնիք, որի կենտրոնում գրված է կազմակերպության կրճատ անվանումը հայերեն և անգլերեն լեզուներով, շրջանագիծը եզրվում է կազմակերպության հայերեն, անգլերեն և ռուսերեն լրիվ անվանումներով: Կազմակերպությունը ունի խորհրդանիշ, որի վրա պատկերված են երկրագունդը գրկած քաղաքացիներ (սա խորհրդանշում է, որ մեր մոլորակի համար պատասխանատու են բոլոր քաղաքացիները), իսկ ներքևում գրված է HELSINKI CITIZENS ASSEMBLY:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Կազմակերպության նպատակներն են՝

2.1.1. աջակցել ժողովրդավարական համակարգի ամրապնդմանը և քաղաքացիական հասարակության զարգացմանը,
2.1.2. պաշտպանել մարդու իրավունքներն և ազատությունները,
2.1.3. աջակցել իրավական գիտելիքների տարածմանը,
2.1.4. նպաստել հասարակության մեջ հանդուրժողության սկզբունքների ձևավորմանը,
2.1.5. աջակցել քաղաքացիական նախաձեռնություններին, նպաստել տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների հետ քաղաքացիական երկխոսությունների մեխանիզմների ձևավորմանը և կատարելագործմանը,
2.1.6. նպաստել օրենսդրության կատարելագործմանը,
2.1.7. աջակցել դատաիրավական համակարգի զարգացմանը,
2.1.8. աջակցել տարածաշրջանում բախումների խաղաղ կարգավորմանը և կանխարգելմանը:

2.2. Առաջադրված նպատակները կազմակերպությունն իրականացնում է հանդիպումների, գիտաժողովների, այցելությունների, դասընթացների, հրապարակումների, մրցույթների, հետազոտությունների և օրենքով չարգելված այլ գործողությունների և նախաձեռնությունների ձևով:

## 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝

3.1.1. օրինականությունը,
3.1.2 խտրականության բացառումը,
3.1.3 բարեխղճությունը,
3.1.4.անդամների շահերի ընդհանրությունը,
3.1.5. անդամության կամավորությունը,
3.1.6. ինքնակառավարումը,
3.1.7. հաշվետվողականությունը:

Կազմակերպությունը ունի կլոր կնիք, որի կենտրոնում գրված է կազմակերպության կրճատ անվանումը հայերեն և անգլերեն լեզուներով, շրջանագիծը եզրվում է կազմակերպության հայերեն, անգլերեն և ռուսերեն լրիվ անվանումներով: Կազմակերպությունը ունի խորհրդանիշ, որի վրա պատկերված են երկրագունդը գրկած քաղաքացիներ (սա խորհրդանշում է, որ մեր մոլորակի համար պատասխանատու են բոլոր քաղաքացիները), իսկ ներքևում գրված է HELSINKI CITIZENS ASSEMBLY:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Կազմակերպության նպատակներն են՝

- 2.1.1. աջակցել ժողովրդավարական համակարգի ամրապնդմանը և քաղաքացիական հասարակության զարգացմանը,
- 2.1.2. պաշտպանել մարդու իրավունքներն և ազատությունները,
- 2.1.3. աջակցել իրավական գիտելիքների տարածմանը,
- 2.1.4. նպաստել հասարակության մեջ հանդուրժողության սկզբունքների ձևավորմանը,
- 2.1.5. աջակցել քաղաքացիական նախաձեռնություններին, նպաստել տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների հետ քաղաքացիական երկխոսությունների մեխանիզմների ձևավորմանը և կատարելագործմանը,
- 2.1.6. նպաստել օրենսդրության կատարելագործմանը,
- 2.1.7. աջակցել դատաիրավական համակարգի զարգացմանը,
- 2.1.8. աջակցել տարածաշրջանում բախումների խաղաղ կարգավորմանը և կանխարգելմանը:

2.2. Առաջադրված նպատակները կազմակերպությունն իրականացնում է հանդիպումների, գիտաժողովների, այցելությունների, դասընթացների, հրապարակումների, մրցույթների, հետազոտությունների և օրենքով չարգելված այլ գործողությունների և նախաձեռնությունների ձևով:

## 3.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝

3.1.1. օրինականությունը,
3.1.2 խտրականության բացառումը,
3.1.3 բարեխղճությունը,
3.1.4.անդամների շահերի ընդհանրությունը,
3.1.5. անդամության կամավորությունը,
3.1.6. ինքնակառավարումը,
3.1.7. հաշվետվողականությունը:

## 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից կազմակերպության պետական գրանցման պահից:
Կազմակերպությունը ունի իրավաբանական անձի համար օրենքով սահմանված բոլոր իրավունքները և պարտականությունները: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով:

**Կազմակերպությունն իրավասու է.**

4.1.1. Ունենալ առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ թե' Հայաստանի Հանրապետության և թե' օտարերկրյա արժույթով.

4.1.2.Ինքնուրույն որոշել իր կազմակերպական կառուցվածքը,

4.1.3.Սահմանել իր խնդիրները, նպատակները և գործունության ուղղությունները,

4.1.4.Օրենքով սահմանված կարգով ներկայացնել և պաշտպանել իր անդամների և շահառուների իրավունքները ու օրինական շահերը այլ հասարակական կազմակերպություններում, դատարանում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում,

4.1.5. Օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ, վարձակալել կամ այլ պայմաններով, այդ թվում նաև անհատույց, օգտագործել անշարժ և շարժական գույք,

4.1.6. Կնքել պայմանագրեր, համաձայնագրեր և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործարքներ,

4.1.7.Ստեղծել այլ կազմակերպություն կամ լինել նրա մասնակիցը,

4.1.8.Ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ,

4.1.9. Տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին,

4.1.10. Կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ,

4.1.11.Համագործակցել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց կողմից ստեղծված Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,

4.1.12 Կազմակերպությունն իրավասու է իրականացնել իր կանոնադրությանը չհակասող և օրենքով չարգելված այլ գործունեություն:

*4.2 Կազմակերպությունը պարտավոր է.*

4.2.1 իր պաշտոնական կայքում (www.hcav.am) հրապարակել Կազմակերպության կանոնադրությունը,
4.2.2. ապահովել իր գույքի օգտագործման տարեկան հաշվետվության հրապարակայնությունը,
4.2.3. օրենքով սահմանված դեպքերում տեղեկատվություն և հաշվետվություն ներկայացնել պետական մարմիններին և հանրությանը:
4.2.4. վարել իր անդամների և կամավորների հաշվառումը,
4.2.5 օրենքով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի,
4.2.6 պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը,
4.2.7 օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր,
4.2.8 Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը,
4.2.9 Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն,
4.2.10 իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը,
4.2.11 կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

4.3. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում կազմակերպության անդամների, և կազմակերպության անդամները պատասխանատվություն չեն կրում կազմակերպության պարտավորությունների համար:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1.1.Կազմակերպության անդամ կամավորության հիմունքներով կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիները, մինչև տասնչորս տարեկան անձը իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա, տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ, ովքեր ընդունում են կազմակերպության կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները: Կազմակերպության անդամ ընդունելու հարցը որոշում է Կազմակերպության խորհուրդը՝ Կազմակերպության Ընդհանուր ժողովի կողմից հաստատված կարգի համաձայն:

5.1.2.Կազմակերպության յուրաքանչյուր անդամ իր անձնական դիմումի հիման վրա կարող է դուրս գալ անդամությունից: Խորհուրդը քննարկում է անդամությունից դուրս գալու հարցը, լսում պատճառները, հնարավորության դեպքում՝ վերացնում դրանք:
Անդամությունից հեռացման որոշումն ընդունվում է խորհրդի անդամների կողմից քվեարկության միջոցով, ձայների 2/3-ով:

5.1.3.Անձի անդամությունը Կազմակերպությանը կարող է դադարեցել խորհրդի որոշմամբ՝ կազմակերպության կողմից հաստատված վարքագծի կանոնների խախտման դեպքում: Ինչպես նաև՝

5.1.4.առնվազն երեք անգամ ընդհանուր ժողովներին չմասնակցելու դեպքում,

5.1.5.անդամության ստանձնումից հետո անհամատեղելի պաշտոններ զբաղեցնելու կամ գործունեությամբ զբաղվելու դեպքում,

5.1.6.Կազմակերպության հեղինակությանը կամ բարի համբավը դիտավորությամբ վնաս պատճառելու կամ այնպիսի արարք կատարելու դեպքում, որը կազմակերպության խորհրդի անդամների բացարձակ մեծամասնության կարծիքով կահամարվի կազմակերպության շահերին հակառակ:

**5.2.Կազմակերպության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի.**

5.2.1. Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման մարմիններում,
5.2.2. Ներկա լինելու Ժողովին կամ Խորհրդի նիստերին անձամբ,
5.2.3. Ցանկացած դեպքում անվճար և առաջնահերթության կարգով օգտվելու Կազմակերպության ծառայություններից.
5.2.4 Ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները.
5.2.5 Վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները.

5.2.6 Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին.
5.2.7 Իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, բողոքներ և առաջարկություններ:
5.2.8 Կազմակերպության անչափահաս անդամներն ունեն Կազմակերպության անդամի համար սույն կանոնադրությամբ սահմանված միևնույն իրավունքներն ու պարտականությունները, բացառությամբ՝ Կազմակերպության կառավարման մարմիններում ընտրելու կամ ընտրվելու իրավունքի:

**5.3. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ պարտավոր է.**

5.3.1. Կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները.
5.3.2. Բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները.

## 6 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

6.1.1. Կազմակերպության ղեկավար բարձրագույն մարմինը Կազմակերպության ընդհանուր ժողովն է, որն օժտված է կազմակերպության կառավարման և գործունեության առնչությամբ վերջնական որոշում կայացնելու իրավասությամբ:

6.1.2. Կազմակերպության ընդհանուր ժողովը հրավիրվում է խորհրդի կողմից հինգ տարին մեկ անգամ՝ մասնակիցների ընդհանուր հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ կամ օրենքով սահմանված կարգով:

6.1.3. Կազմակերպության նախագահի նախաձեռնությամբ, կամ կազմակերպության անդամների 1/3-ի կամ կազմակերպության խորհրդի 2/3-ի պահանջով կարող է հրավիրվել արտահերթ ընդհանուր ժողով՝ Խորհրդի կողմից:

6.1.4.Կազմակերպության անդամները տեղեկացվում են ընդհանուր ժողովի հերթական նիստերի օրվա, ժամի և տեղի մասին ոչ ուշ քան նիստի օրվանից հինգ օր առաջ, արտահերթ նիստերի հրավիրման մասին ոչ ուշ քան հինգ օր առաջ։

6.1.5. Ընդհանուր ժողովի նիստերն արձանագրվում են ընդհանուր ժողովի քարտուղարի կողմից և արխիվացվում։

6.1.6.Կազմակերպության ընդհանուր ժողովն իրավազոր է նրանում քննարկվող հարցերի կապակցությամբ որոշումներ կայացնել, եթե ընդհանուր ժողովի նիստին մասնակցում են Կազմակերպության անդամների թվի կեսից ավելին։

6.1.7.Կազմակերպության ընդհանուր ժողովում քննարկվող հարցերի կապակցությամբ որոշումները կայացվում են բաց քվերակությամբ։ Անդամներից առնվազն մեկի պահանջով քվեարկության դրված հարցի վերաբերյալ տեղի է ունենում փակ գաղտնի քվեարկություն։ Որոշումը համարվում է ընդունված, եթե տվյալ որոշմանը կողմ են քվեարկում ընդհանուր ժողովին ներկա Կազմակերպության անդամների կեսից ավելին՝ բացառությամբ կազմակերպության վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշումների, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունվում են, եթե տվյալ որոշմանը կողմ են քվեարկում ընդհանուր ժողովին ներկա Կազմակերպության անդամների երկու երրորդից ավելին։

*6.2. Կազմակերպության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն է.*

6.2.1.Ընտրել կազմակերպության նախագահ՝ հինգ տարի ժամկետով,
6.2.2.Կատարելու Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատելու կանոնադրությունը.
6.2.3.Ստեղծելու այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունելու այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին.,
6.2.4 Հաստատել Կազմակերպության կառուցվածքը,
6.2.5.Ձևավորել կազմակերպության խորհուրդ՝ հինգ տարի ժամկետով,
6.2.6 Որոշումներ ընդունելու Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին.
6.2.7.Որոշում կայացնել կազմակերպության խորհրդի, նախագահի գործունեության վաղաժամկետ դադարեցման մասին,
6.2.8.Լսել և հաստատել կազմակերպության նախագահի, խորհրդի հաշվետվությունները,
6.2.9.Հաստատել խորհրդի գործունեության կարգը,
6.2.10.Քննարկել ընդհանուր ժողովին կազմակերպության անդամների կողմից ուղղված բողոքները, դիտողություններն ու առաջարկությունները,

6.2.11 Որոշումներ ընդունելու Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված մարմինների կազմավորման, ընտրության (նշանակման) կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին.
6.2.12 Հաստատելու Կազմակերպության ռազմավարությունը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն.
6.2.13 Առնվազն հինգ տարին մեկ հաստատելու գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները.
6.2.14 Դադարեցնելու Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը.
6.2.15 Ընդունելու որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին.
6.2.16 Ընդունելու որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի.
6.2.17Իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
6.2.18 Իրականացնել Կազմակերպության ընդհանուր, կանոնադրական և ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը:

## 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

7.1.1.Կազմակերպության ընդհանուր ժողովի նիստերի գումարման միջև ընկած ժամանակահատվածում կազմակերպության գործունեությունը ղեկավարում է կազմակերպության Խորհուրդը:

7.1.2.Կազմակերպության Խորհուրդը կոլեգիալ կառավարման մարմին է, որն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից հինգ տարի ժամկետով: Կազմակերպության Խորհրդի նիստերը գումարվում են տարին առնվազն չորս անգամ:

7.1.3.Խորհրդի նիստերը կարող են տեղի ունենալ, եթե մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին՝ ներառյալ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ: Խորհրդի նիստերը կարող են տեղի ունենալ միաժամանակ առկա և հեռավար պայմաններում: Խորհուրդի նիստը նախագահում է խորհրդի նախագահը, նրա բացակայության դեպքում՝ խորհրդի այլ անդամ:

7.1.4.Խորհրդի նախագահը ընտրվում է խորհրդի կողմից հինգ տարի ժամկետով և իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ նշված իր լիազորությունները:

7.1.5.Այն դեպքերում, երբ կազմակերպության նախագահը անհաղթահարելի ուժի հետևանքով առնվազն 40 օր հնարավորություն չունի որոշումներ ընդունել, խորհրդի նախագահը կամ խորհրդի որոշմամբ խորհրդի այլ անդամ ժամանակավորապես ստանձնում է կազմակերպության նախագահի լիազորությունները՝ մինչև անհաղթահարելի ուժի վերանալը կամ նոր նախագահի ընտրվելը:

7.2.1 Խորհրդի որոշումները կայացվում են բաց, իսկ խորհրդի անդամների միաձայն համաձայնությամբ նաև փակ, գաղտնի քվեարկությամբ և համարվում են ընդունված, եթե քննարկվող հարցի օգտին կողմ են քվեարկում անդամների կեսից ավելին՝ բացի կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերի:

7.2.2 Բաց քվեարկությունը կատարվում է խորհրդի անդամի կողմից քննարկվող հարցի վերաբերյալ ձեռքը բարձրացնելու միջոցով: Խորհրդի անդամի կողմից քննարկվող հարցի վերաբերյալ «կողմ» քվեարկելու դեպքում խորհրդի անդամը բարձրացնում է ձեռքը: Բաց քվեարկության արդյունքները հաշվարկվում է խորհրդի նիստը վարողի կողմից: Իսկ փակ, գաղտնի քվեարկությունը կատարվում է քննարկվող հարցի վերաբերյալ նախապես պատրաստված թերթիկների վրա «կողմ» կամ «դեմ» նշում կատարելու միջոցով, որը հաշվարկվում է խորհրդի նիստին ներկա խորհրդի անդամների կողմից:

7.2.3 Խորհրդի նիստերն արձանագրվում են խորհրդի քարտուղարի կողմից: Արձանագրությունը ստորագրվում է խորհրդի նիստին ներկա բոլոր անդամների կողմից: Խորհրդի անդամների առաջարկով նիստերը կարող են ձայնագրվել:

7.2.4. Խորհրդի նիստի ավարտից հետո երեք օրվա ընթացքում Խորհրդի նիստի արձանագրությունը քարտուղարի կողմից ներկայացվում է կազմակերպության անդամներին և աշխատակազմին:

7.2.4.Կազմակերպության Խորհուրդը հաշվետու է ընդհանուր ժողովին:

**7.3 Կազմակերպության Խորհուրդն իրավասու է՝**

7.3.1.ընտրել Խորհրդի նախագահին,
7.3.2վաղաժամկետ դադարեցնել Խորհրդի նախագահի լիազորությունները,
7.3.4.հաստատել կազմակերպության աշխատակիցների աշխատավարձի սանդղակը,
7.3.5.աջակցել Կազմակերպության ֆոնդահայթայթման գործողություններին,
7.3.6. ըստ անհրաժեշտության տրամադրել փորձագիտական աջակցություն,

7.3.7.կարգավորել անդամագրման, անդամության և անդամության դադարեցման հարցերը՝ համաձայն ընդհանուր ժողովի կողմից հաստատված կարգի,

7.3.8հաստատել կազմակերպության տարեկան գործողությունների պլանը՝ կազմակերպության նախագահի ներկայացմամբ,

7.3.9.մշտադիտարկել ռազմավարական պլանի իրականացումը,

7.3.10.ապահովել ընդհանուր ժողովի հանձնարարությունների ու որոշումների իրականացումը,

7.3.11.հաստատել կազմակերպության կառավարման ընթացակարգերը՝ նախագահի առաջարկությամբ,

7.3.13.հաստատել կազմակերպության գործունեության ռազմավարական պլանը,

7.3.14.համաձայնություն տալ Կազմակերպության նախագահի կողմից հինգ միլիոն ՀՀ դրամից ավելի արժողությամբ Կազմակերպության ցանկացած տեսակի գույքի, այդ թվում ֆինանսական միջոցների տնօրինման և կառավարման վերաբերյալ:

7.4. Խորհուրդը իրավասու է ընդունել հրապարակային հայտարարություններ, զեկույցներ և դիրքորոշումներ՝ կազմակերպության կամ կազմակերպության անդամի շահերին առնչվող դեպքերում:

## 8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

**8.1.Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է:**

8.1.1.Կազմակերպության նախագահը Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարն է, որն իրականացնում է գործադիր մարմնի լիազորություններ: Կազմակերպության նախագահի ընտրություններն իրականացվում են ընդհանուր ժողովի կողմից՝ հինգ տարի ժամկետով:

8.1.2.Կազմակերպության նախագահը հաշվետու է կազմակերպության խորհրդին և ընդհանուր ժողովին:

8.1.3.Կազմակերպության նախագահը կազմակերպության լիազոր ներկայացուցիչն է բոլոր պետական, հասարակական, միջազգային կազմակերպություններում, կազմակերպության անունից կատարում է իրավաբանական գործողություններ:

**8.2.Կազմակերպության նախագահն իրավասու է՝**

8.2.1 Ապահովում է Ժողովի կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների որոշումների կատարումը:

8.2.2 տնօրինում և կառավարում է Կազմակերպության 5 միլիոն ՀՀ դրամ արժողությամբ ցանկացած տեսակի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները՝ միանձնյա, իսկ 5 միլիոն ՀՀ դրամը գերազանցող արժողությամբ գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները՝ Խորհրդի համաձայնությամբ:
8.2.3.Ապահովել կազմակերպության համընդհանուր արդյունավետ գործունեությունը և զարգացումը, ռազմավարության պատշաճ իրագործումը:
8.2.4.Ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, միջազգային և հանրապետական միջոցառումներում, այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում՝ առանց լիազորագրի:
8.2.5.Ձևավորել իր աշխատակազմը, հաստատել կազմակերկերպության հաստիքացուցակը, տարեկան ծախսերի նախահաշիվը:
8.2.6.Կազմակերպության անունից բանկերում բացել հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ:
8.2.7. Կնքել պայմանագրեր, որոնք չեն հակասում կանոնադրությանը:
8.2.8. Իր իրավասության սահմաններում արձակել հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալ պարտադիր ցուցումներ և վերահսկել դրանց կատարումը:
8.2.9.Հիրավիրել խորհրդի արտահերթ նիստ:
8.2.10.Կազմակերպությունը ներկայացնելու համար տալ համապատասխան լիազորագրեր:
8.2.11. Հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները:
8.2.12.Հաստատել Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները ընդհանուր ժողովի գումարմանը նախորդող տարիների կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք 5 տարին մեկ անգամ ներկայացնել ընդհանուր ժողովի հաստատմանը:
8.2.13. Իրականացնել օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

## 9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Կազմակերպությունն իրավասու է իր անունից կնքել օրենքով չարգելված պայմանագրեր ու համաձայնագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ, ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների և շահառուների (այն անձանց շահերը ում իրավունքները ենթադրաբար խախտվել են) իրավունքներն ու օրինական շահերը այլ հասարակական միավորումներում, դատարանում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում: Կազմակերպությունն ինքնուրույն ֆինանսական գործունեություն է

վարում, բացում է բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով, ստանում է վարկեր, օրենքով սահմանված կարգով իր հիմնադրած տնտեսական ընկերությունների միջոցով իրականացնում է տնտեսական գործունեություն, որն անհրաժեշտ է սույն կանոնադրությամբ նախատեսված խնդիրներն ու նպատակներն իրագործելու համար, ունի սեփական շրջանառու միջոցներ ու հաշվեկշիռ:
Կազմակերպության գույքը հանդիսանում է կազմակերպության սեփականությունը:

Կազմակերպությունը չի սահմանում անդամավճար և մուտքավճար:

**9.1.Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներն են.**

9.1.1.ֆիզիկական և իրավաբանական անձանց (այդ թվում՝ արտասահմանյան) կամավոր նվիրատվություններն ու հանգանակությունները,
9.1.2.օրենքով չարգելված այլ մուտքերը,

9.1.3.կազմակերպությունը չի կարող ֆինանսական միջոցներ ստանալ իր կանոնադրական նպատակներին հակասող միջոցներից:

9.2.Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք, այդ թվում շինություններ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ և օրենքով չարգելված այլ գույք:
9.3. Կազմակերպության միջոցներն օգտագործվում են կազմակերպության կանոնադրական պահանջների իրագործման համար:

## 10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԵՎ ԱՅԴ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1.Կազմակերպության լուծարման մասին հարցը օրակարգում դնելու մասին որոշումը համարվում է ընդունված, եթե կողմ են քվեարկում ընդհանուր ժողովի նիստին մասնակցող Կազմակերպության անդամների 2/3-ը: Կազմակերպության վերակազմավորման կամ լուծարման մասին որոշումը քննարկվում է օրակարգում դրվելուց մեկ ամիս հետո և համարվում է ընդունված, եթե դրան կողմ են քվեարկում ընդհանուր ժողովին մասնակցող Կազմակերպության անդամների 2/3-ը: Լուծարման դեպքում ընդհանուր ժողովը ստեղծում է լուծարման հանձնաժողով, որոշում լուծարման կարգը և ժամկետները, կազմում կազմակերպության միջոցների վերջնահաշվարկը:

10.2.Կազմակերպության լուծարումը հանգեցնում է նրա գործունեության դադարեցմանը, առանց իրավունքներն ու պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց հանձնելու:

10.3. Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

10.4. Կազմակերպությունը ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է վերակազմակերպվել օրենքով նախատեսված ձևով և կարգով:

10.5. Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև օրենքով սահմանված դեպքերում:

## 11. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

11.1.Կազմակերպության կանոնադրության մեջ կարող են կատարվել փոփոխություններ, լրացումներ կամ կարող է կազմվել նոր խմբագրությամբ կանոնադրություն՝ օրենքով սահմանված կարգով և ձևով:
11.2.Կազմակերպության կանոնադրության փոփոխությունները և (կամ) լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունն իրավաբանական ուժ են ձեռք բերում դրանց պետական գրանցման պահից:
11.3. Կազմակերպության պետական գրանցման նպատակով ներկայացվող կանոնադրության կամ կանոնադրության փոփոխությունների ու լրացումների, ինչպես նաև նոր խմբագրությամբ կազմված կանոնադրության յուրաքանչյուր օրինակ պետք է ստորագրված լինի կազմակերպության Նախագահի կողմից և ամրակարված այնպես, որ ամրակարման վրա պետական գրանցման մարմնի կողմից դրվելիք կնիքի դրոշմը հուսալիորեն ապահովի կանոնադրության ամբողջականությունը:
11.4. Եթե կազմակերպության կանոնադրությունը կհակասի կանոնադրության պետական գրանցումից հետո նոր ընդունված օրենքներին, ապա կազմակերպությունը պարտավոր է կազմակերպության ընդհանուր ժողովի առաջիկա նիստում իր կանոնադրությունը համապատասխանեցնել օրենքների պահանջներին, իսկ մինչ այդ շարունակել գործել օրենքներին համապատասխան:
11.5. Կազմակերպության կանոնադրության պետական գրանցում ստացած փոփոխությունները և լրացումներն այդ կանոնադրության անբաժանելի մասն են հանդիսանում, բացառությամբ նոր խմբագրությամբ կազմված և գրանցված կանոնադրության:
11.6.Սույն Կանոնադրությունը (նոր խմբագրությամբ) ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից պետական գրանցման պահից:

HELSINKI CITIZENS ASSEMBLY

Սույն կանոնադրությունը կազմված է 14.11.2023թ։